ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Գործ թիվ ԵԴ2/0978/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.03.2024թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Մ. Ստեփանյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով ԱՁ Լևոն Սերժիկի Ալավերդյանի ներկայացրած հայցադիմումը ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

ԱՁ Լևոն Սերժիկի Ալավերդյանի ներկայացուցիչ Ա.Բեժանյանը 02.02.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ պահանջելով անվավեր ճանաչել ԱՁ Լևոն Սերժիկի Ալավերդյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 04.01.2024 թվականի որոշումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաաքացիական դատարանի դատավոր Մ.Տաշչյանի 07.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ հայցադիմումի ներածական մասում Հայցվորի կողմից չեն ներկայացվել Հայցվորի և Պատասխանողի էլեկտրոնային փոստի հասցեները:

Հայցվորի ներկայացուցիչը 22.02.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել դատարան, որը մակագրվել է դատավոր Մ.Ստեփանյանին և վերջինիս 01.03.2024 թվականի որոշմամբ վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը 13.03.2024 թվականին կրկին ներկայացրել է հայցադիմում, որը դատավոր Մ.Ստեփանյանին է հանձնվել 15.03.2024 թվականին:

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջել նշված ապացույցները, որոնք վերջինս պետք է դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ ու 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ԱՁ Լևոն Սերժիկի Ալավերդյանի ներկայացրած հայցադիմումն ընդունեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն

անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ, և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 03.05.2024 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

2. **Պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջել 04.01.2024 թվականին կայացված ԱՁ Լևոն Սերժիկի Ալավերդյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոնք պատասխանողը կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունն իրենից անկախ պատճառներով:**

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանողի կողմից ենթակա է կատարման այն ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**